ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 027/1/2026-Ա

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐՄԱՆ և ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁԱՆԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

26.03.2026թ. ք. Երևան

Հիմք ընդունելով «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանելու մասին» թիվ 884-Ն որոշումը և «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով.

Հրամայում եմ

1. Արդարադատության ակադեմիայի արխիվային փաստաթղթերի փորձագիտական արժեքավորման և կարգավորման նպատակով ստեղծել փորձագիտական հանձնաժողով հետևյալ կազմով.
   - Հանձնաժողովի նախագահ, պրոռեկտոր՝ Մ.Ամյան

Հանձնաժողովի անդամներ.
   - Դատական համակարգի ունկնդիրների ուսուցման կազմակերպման բաժնի ղեկավար՝ Վ.Գրիգորյան.
   - Դատախազության և քննչական համակարգի ունկնդիրների ուսուցման կազմակերպման բաժնի ղեկավար՝ Հ.Ավետիսյան.
   - Անձնակազմի և փաստաթղթաշրջանառության բաժնի ղեկավար՝ Է.Խուբլարյան.
   - Հանձնաժողովի քարտուղար, գրադանավար-արխիվավար՝ Վ.Նալբանդյան.
   - Արխիվային գործի մասնագետ՝ Ն.Խաչատրան:
2. Հանձնաժողովի նախագահին՝ կազմակերպել նշված աշխատանքները և կազմված ամփոփիչ փաստաթղթերը ներկայացնել հաստատման:
3. Առանձնացված փաստաթղթերը ոչնչացնել համաձայն գործող կարգի:

Ս.ԱՌԱՔԵԼՅԱՆ